ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք. Մարտունի, Շահումյան 2,

Հեռ. 060-74-34-01

№ 442

18 մայիս 2021 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Գ.ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սանոսյան.

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներից ելնելով, ուղարկվում են Մարտունի համայնքի ղեկավարի կողմից 10.05.2021թ. մինչև 14.05.2021թ. ընկած ժամանակահատվածում ընդունված որոշումները:

Առդիր՝ 13 թերթ:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

կատարող՝
Ռ.Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 167-Ա

10 մայիսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՊՈՌՇՅԱՆ ՓՈՂՈՑ 15/1-15/1-1 ՀԱՍՑԵԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտունի քաղաքի բնակիչ Մնացական Ավետիքի Էլոյանի դիմումը (մուտք 27 հունվար 2021 թվական), նկատի ունենալով, որ Մարտունի քաղաքի Պոռշյան փողոց 15/1-15/1-1 հասցեում գտնվող իր սեփականությունը հանդիսացող հողամասի վրա Մնացական Ավետիքի Էլոյանի կողմից ինքնակամ կառուցված հասարակական կառուցապատման նշանակության շինությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 18.05.2006թ <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 2-րդ բաժնի,20.01.2021 թվականին հաստատված Հայաստանի Հանրապետության «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին »օրենքում լրացումներ կատարելու պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարտունի քաղաքի Պոռշյան փողոց 15/1-15/1-1 հասցեում իր սեփականությունը հանդիսացող հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա Մնացական Ավետիքի Էլոյանի կողմից ինքնակամ կառուցված 22,5 քմ կառուցապատ և 18,23 քմ ներքին մակերեսով 1-ին հարկ խանութը, 22,5 քմ կառուցապատ

և 21,63 քմ ներքին մակերեսով 2-րդ հարկ խանութը ճանաչել օրինական որպես Մնացական Ավետիքի Էլոյանի (նույնականացման քարտ՝ 000755330, ծնված՝ 10.08.1964 թվականին ,տրված՝ 04.12.2012 թվականին 043-ի կողմից) սեփականությունը:

2.Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացրած անձ Մնացական Ավետիքի Էլոյանի համայնքապետարանի 900145101144 հաշվի համարին վճարել ինքնակամ շինության օրինականացման արժեքը՝

45 x 20.000 x 0,069 = 62100 (վաթսուներկու հազար մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Պարտավորեցնել Մնացական Ավետիքի Էլոյանին դիմել Հայաստանի Հանրապետության Անշարժ Գույքի Կադաստրի Կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանում նշված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտանական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

10 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 168-Ա

10 մայիսի 2021 թվական

ԱՐՍԵՆ ԼԻՊԱՐԻՏԻ ԵՐԱՆՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի աշխատակիցների կողմից կազմված 26.04.2021 թվականի թիվ 31 արձանագրությունը, և 30.04.2021 թվականի իրավաբանի թիվ 33 եզրակացությունը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և 07.05.2021 թվականի Մարտունու համայնքապետարանում իրականացված վարչական վարույթի ընթացքում բացահայտված գործի բոլոր հանգամանքները, հաստատված համարելով Արսեն Լիպարիտի Երանոսյան կողմից իր սեփականությունը հանդիսացող հողամասի վրա ինքնակամ շինություն կառուցելու փաստը և ղեկավարվելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 26 -րդ կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Արսեն Լիպարիտի Երանոսյան նկատմամբ նշանակել տուգանք 200000 (երկու հարյուր հազար) դրամի չափով քաղաք Մարտունի Գետափնյա 1-ին փողոց թիվ 27/11 հասցեում իր սեփականությունը հանդիսացող հողամասի վրա ինքնակամ շինություն կառուցելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության հիմքով :

2. Պահանջել Արսեն Լիպարիտի Երանոսյանից 200000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանքը վճարել համայնքապետարանի 900145101169 հաշվի համարին 15-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբան-գլխավոր մասնագետ Զավիկ Խաչատրյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արսեն Լիպարիտի Երանոսյան որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

10 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 169-Ա 11 մայիսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10.03.2021 ԹՎԱԿԱՆԻ «ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ Պ. ՍԱԿԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0055-0015 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 100-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Մարտունի համայնքի ղեկավարի 10.03.2021 թվականի «Մարտունի քաղաքի Պ. Սևակի 1-ին նրբանցքթիվ 15 հասցեում գտնվող 05-003-0055-0015 ծածկագրով հողամասը սեփականության իրավունքով անհատույց հատկացնելու մասին» թիվ 100-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1.1 Որոշման նկարագրի մասի «նկատի ունենալով, որ նրան պատկանող տնամերձ հողամասի հատկացման ընդհանուր մակերեսը կազմում է 0,101 հա, սակայն նա փաստացի օգտագործում է 0,1052 հա տնամերձ հողամաս, այսինքն՝ հատկացված հողամասից ավել է օգտագործում՝ 0,0042 հա հողամաս » բառերը և թվերը փոխել «Ա. Ձ. Մնացական Շահումյանի չափագրությունը, քաղվածքը և հաշվի առնելով, որ Բայանդուր Ազատի Խլոյանին պատկանող Պ. Սևակի 1-ին նրբանցք թիվ 15 հասցեում գտնվող տնամերձ հողամասը առաջին պետական գրանցում չի ստացել տերը անհայտ լինելու պատճառով և հաշվի առնելով, որ Բայանդուր Խլոյանի ընտանիքին հատկավցել է 0,54 հա հողամաս, որից պետական գրանցում է ստացել 0,539 հա, իսկ նրանց պատկանող 0,1052 հա տնամերձ հողամասը չի գերազանցում ընդհանուր հատկացվածի 20 % և տիրապետվող» բառերով և թվերով:

1.2 Որոշման 1-ին կետի «Մարտունի քաղաքի բնակիչ Բայանդուր Ազատի Խլոյանին պատկանող սեփականաշնորհված տնամերձ հողատարածքի հատկացման չափից 20% ավել օգտագործվող 0,004 հա հողամասի նկատմանբ» բառերը և թվերը փոփոխել «0,1052 հա հողամասի» բառերով և թվերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

11 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 170-Ա 12 մայիսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ Դ. ԱՆՀԱՂԹԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/1 ՀԱՍՑԵԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտունի համայնքի բնակիչ Արմեն Ապետի Գասպարյանի դիմումը (մուտք 29 հունվար 2021 թվական) և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912- Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1 կետի ,,ա" ենթակետի, 34 կետի, 35-րդ կետի ,,դ" ենթակետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 20.01.2021 թվական հաստատված «Անշարժ գույքի հարկով հարկվող նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատմանկարգը սահմանելու մասին » օրենքում լրացումներ կատարելու պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարտունի քաղաքի Դ. Անհաղթի փողոց թիվ 1/1 հասցեում համայնքային սեփականություն հանդիսացող 16,93 քմ կառուցապատ և 7,77 քմ ներքին մակերեսով առաջին հարկ շինությունը 16,93 քմ կառուցապատ 9,49 քմ ներքին մակերեսով երկրորդ հարկ շինությունը, 23,45 քմ կառուցապատ և 16,98 քմ ներքին մակերեսով անասնաշենքը, 11,39 քմ պարիսպը, ինչպես նաև 0,0113 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարել ինքնակամ կառույցն իրականացրած անձ Արմեն Ապետի Գասպաքրյանի (անձնագիր՝ AS 0361819, ծնված՝ 19.07.1976 թվական, տրված 07.09.2018 թվականին, 043-ի կողմից) և Ապետ Գորգինի Գասպարյանի (անձնագիր՝ AT 0288151, ծնված՝ 23.01.1952 թվականին, տրված 19.08.2019 թվականին, 043-ի կողմից) :

2. Պարտավորեցնել Արմեն Ապետի Գասպարյանին համայնքի բյուջեի 900145101144 հաշվի համարին վճարել շինության արժեքը՝ 68,7 քմ x 30.000 x 0,069 = 142210 (մեկ հարյուր քառասուներկու հազար երկու հարյուր տաս) Հայաստանի Հանրապետության դրամ և 900145101193 հաշվի համարին հողամասի արժեքը՝ 113 քմ x 342 = 38646 (երեք հարյուր ութանասունվեց հազար քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

Ընդամենը՝ 180856 (մեկ հարյուր ութանասուն հազար ութ հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Պարտավորեցնել Արմեն Ապետի Գասպարյանին դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Ապետի Գասպարյանին որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

12 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 171-Ա 12 մայիսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ Դ. ԱՆՀԱՂԹԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/2 ՀԱՍՑԵԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտունի համայնքի բնակիչ Արմեն Ապետի Գասպարյանի դիմումը (մուտք 29 հունվար 2021 թվական) և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1 կետի ,,ա" ենթակետի, 34 կետի, 35-րդ կետի ,,դ" ենթակետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 20.01.2021 թվական հաստատված «Անշարժ գույքի հարկով հարկվող նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքում լրացումներ կատարելու պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարտունի քաղաքի Դ. Անհաղթի փողոց թիվ 1/2 հասցեում համայնքային սեփականություն հանդիսացող 10.70 քմ մակերեսով կառուցապատ պարիսպը ինչպես նաև 0,006718 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարել ինքնակամ կառույցն իրականացրած անձ Արմեն Ապետի Գասպարյանի (անձնագիր՝ AS 0361819, ծնված՝ 19.07.1976 թվական,տրված 07.09.2018 թվականին, 043-ի կողմից) և Ապետ Գորգինի Գասպարյանի (անձնագիր՝ AT 0288151, ծնված՝ 23.01.1952 թվականին, տրված 19.08.2019 թվականին, 043-ի կողմից) :

2. Պարտավորեցնել Արմեն Ապետի Գասպարյանին համայնքի բյուջեի 900145101144 հաշվի համարին վճարել շինության արժեքը՝ 10,70քմ x 30.000 x 0,069 = 22150 (քսաներիկու հազար մեկ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ և 900145101193 հաշվի համարին հողամասի արժեքը՝ 67,18 քմ x 342 =

22976 (քսաներկու հազար ինը հարյուր յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

Ընդամենը՝ 45126 (քառասունհինգ հազար մեկ հարյուր քսանվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Պարտավորեցնել Արմեն Ապետի Գասպարյանին դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Ապետի Գասպարյանին որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

12 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 172-Ա

13 մայիսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 15/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՑ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ, 10-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.07. 2017թ. թիվ 757 որոշման, Հայաստանի Հանրապետության Կառավարության 02.02.2002թ. «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի մասի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մարտունի քաղաքի Շահումյան փողոցի թիվ 15/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 0,1942 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատումից փոփոխել բնակելի կառուցապատման նշանակության հողի:
2.Առանց նախագծային փոփոխությունների հողամասի վրա գոյություն ունեցող 654,98 քմ մակերեսով նպատակային նշանակությունը հասարակականից փոփոխել բնակելիի , իսկ գործառնական նշանակությունը ախտահանման մասնաշենքից փոփոխել բազմաբնակարան բնակելի շենքի:
3. Առանց նախագծային փոփոխությունների հողամասի վրա գոյություն ունեցող 2,49 քմ մակերեսով պարիսպի նպատակային նշանակությունը հասարակականից փոփոխել բնակելիի:
4. Մարտունի քաղաքի Շահումյան փողոց 15/1 հասցեի բազմաբնակարան շենքին հատկացնել 0,1942 հա սպասարկման տարածք:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

13 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 173-Ա 13 մայիսի 2021 թվական

ՍԱԹԵՆԻԿ ՌԱԶՄԻԿԻ ԱՐՍԵՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի №596-Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 16.12.2020 թվականի թիվ 82 -Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Սաթենիկ Ռազմիկի Արսենյանի կողմից ներկայացված դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սաթենիկ Ռազմիկի Արսենյանին տալ քաղաք Մարտունի, Նարեկացի 8-րդ նրբանցք թիվ 12 հասցեում գտնվող հողամասի վրա նոր կառուցվող բնակելի տան, նկուղային մասով ավտոտնակի և պարիսպի շինարարության թույլտվություն :
2. Պարտավորեցնել Սաթենիկ Ռազմիկի Արսենյանին Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:
3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունու համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

13 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 174-Ա

13 մայիսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԴԱՀԼԻՃՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ընտրական օրենսգրքի» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրություններն անցկացնելու համար կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրել Մարտունու մշակույթի տան դահլիճը.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

13 մայիսի 2021 թվական
ք. Մարտուի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 175-Ա 14 մայիսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ընտրական օրենսգրքի» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին մասի, 104-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարտունի քաղաքի տարածքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների համար սահմանել տեղամասային վեց կենտրոններ:

ա) Մարտունի քաղաքի թիվ 2 հիմնական դպրոց- քաղաք Մարտունի, Մ. Հերացու փողոց թիվ 10
բ) Մարտունի քաղաքի թիվ 1 մանկապարտեզ - քաղաք Մարտունի, Կոմիտասի փողոց 29
գ) Մարտունի քաղաքի թիվ 3 մանկապարտեզ - քաղաք Մարտունի , Պողոշյան փողոց 39
դ)Մարտունի քաղաքի թիվ 1 հիմնական դպրոց - քաղաք Մարտունի, Կոմիտաս փողոց 25
ե)Մարտունի քաղաքի մշակույթի տուն - քաղաք Մարտունի, Մյասնիկյան փողոց 23
զ)Մարտունի քաղաքի թիվ 4 մանկապարտեզ - քաղաք Մարտունի, Երևանյան 40

2. Սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմնին, տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

14 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի